

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
№ ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-16/22**

ք. Երևան

« 12 » « 09 » 2016թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Խ.Աղաբեկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Մ.Գրիգորյանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «2016 թվականի օգոստոսի 29-ից սեպտեմբերի 1-ը Երևան քաղաքում կայանալիք հայ-իրանական աշխատանքային խմբի (18 անձ՝ 4 անձ Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակությունից, 2 անձ դեսպանատան ներկայացուցիչ, 1 անձ թարգմանիչ, 11 անձ հայկական պատվիրակությունից) հանդիպման» միջոցառման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի Հավելված №2-ով սահմանված ծախսերի նախահաշվին համապատասխան:

**2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է սույն պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2. Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:



2.4.3 Սույն պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

### **3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը**

3.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրության) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված №3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1):

3.2. Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

### **4. Պայմանագրի գինը**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **934 000 (ինը հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ, որը ֆինանսավորվելու ՀՀ վարչապետի 2016 թվականի օգոստոսի 24-ի «Հայ-Իրանական փորձագիտական խմբի 21-րդ տարեկան նիստը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու մասին» N 769-Ա որոշմամբ նախատեսված միջոցների հաշվից:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 30 բանկային օրվա ընթացքում:

### **5. Կողմերի պատասխանատվությունը**

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասին գնի նկատմամբ:

5.4. Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:



5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱՃՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այսպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. Այլ պայմաններ**

7.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2016 թվականի օգոստոսի 29-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի կողմից պայմանագրային պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ծանուցումն ուղարկում է պայմանագիր կնքած անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն ենթակետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.4. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի

1321/08-2016/1929

վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5.Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (հնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6.Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7.Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հավելվածներ 1; 2; 3 և 3.1 հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8.Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9.Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

### **8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և սպորազրույթությունները**

#### **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ բնապահպանության նախարարություն**

ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք  
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011006021

ՀՎՀՀ 02507198

ՀՀ բնապահպանության նախարարության  
աշխատակազմի ղեկավար

**Խ. Աղաբեկյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

#### **ԿԱՏԱՐՈՂ**

**«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ**

ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 19

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

ՀՀ 163008143634

ՀՎՀՀ 01505315

«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի  
գլխավոր տնօրեն



**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ բնապահպանության նախարարություն

ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք  
 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011006021

ՀՎՀՀ 02507198

ՀՀ բնապահպանության նախարարության  
 աշխատակազմի ղեկավար

**Խ. Աղաբեկյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 19

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

ՀՀ 163008143634

ՀՎՀՀ 01505315

«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի




**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

<p>1. Գնման առարկայի՝                  ծառայության անվանումը</p>	<p>2016 թվականի օգոստոսի 29-ից սեպտեմբերի 1-ը Երևան քաղաքում                  կայանալիք հայ-իրանական աշխատանքային խմբի (18 հոգի՝ 4 անձ                  Իրանի Իսլամական հանրապետության պատվիրակությունից, 2 անձ                  ղեկավարության ներկայացուցիչ, 1 անձ թարգմանիչ, 11 անձ հայկական                  պատվիրակությունից) հանդիպման միջոցառման կազմակերպման                  ծառայություններ</p>
<p>2. Գնման առարկայի՝                  ծառայության մանրամասն                  նկարագիրը և                  իրականացման համար                  ներկայացվող                  պահանջները</p>	<p>1. Տրանսպորտային ծառայություններ, այդ թվում                  1.1. Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակության                  (4 մարդ) դիմավորման և ճանապարհման կազմակերպում                  օդանավակայանում,                  1.2. Մշակութային էքսկուրսիայի կազմակերպում Սևան,                  2. Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակության անդամներին                  հյուրանոցով ապահովում,                  3. Դահլիճի՝ ներառյալ տեխնիկայի վարձակալություն (30-31.08.2016թ.),                  4. Աշխատանքային ճաշերի (30.08-01.09.2016թ., 4 անձի համար), ընթրիքի                  (29.08.2016թ., 4 անձի համար), սուրճի ընդմիջումների (30.08-                  31.08.2016թ., 15 անձի համար, օրական 2 անգամ) կազմակերպում:</p>
<p>3. Ծառայությունների                  մատուցման հասցեն</p>	<p>Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան</p>
<p>4. Ծառայության մատուցման                  սկիզբը</p>	<p>« 29 » « օգոստոսի » 2016թ.</p>
<p>5. Ծառայության մատուցման                  ավարտը</p>	<p>« 01 » « սեպտեմբերի » 2016թ.</p>

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**  
 ՀՀ բնապահպանության նախարարություն

ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք  
 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
 ՀՀ 900011006021  
 ՀՎՀՀ 02507198

ՀՀ բնապահպանության նախարարության  
 աշխատակազմի գեներալ-դիրեկտոր

**ԻՅ Աղաբեկյան**  
  
 (ստորագրություն)  
 Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**  
 «Անի Պլազա Հոթել» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 19  
 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ  
 ՀՀ 163008143634  
 ՀՎՀՀ 01505315

«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի

**Անի Պլազա Հոթել**  
 ՀԱՅԿԵՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ  
 ԿՈՄՓԱՆԻԱ  
 «ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՈՏԵԼ» ՓԲԸ  
 (ստորագրություն)  
 00555315

**ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻԿ**

«2016 թվականի օգոստոսի 29-ից սեպտեմբերի 1-ը Երևան քաղաքում կատարվող համալիր աշխատանքային խմբի (18 անձ՝ 4 անձ Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակությունից, 2 անձ դեսպանատան ներկայացուցիչ, 1 անձ թարգմանիչ, 11 անձ հայկական պատվիրակությունից) հանդիպման հետ կապված ծախսերի»

(հազար դրամ)

N	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՏ ԱՊՐԱՆՔԻ ՏԻՊԸ	ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐԸ	ՀԱՃԱԽԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ	ՄԵԿ ՄԻԱՎՈՐԻ (ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ) ԱՐԺԵՔԸ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ
1	Տրանսպորտային ծառայություններ այդ թվում					116.00
	Հյուրերի դիմավորում ճանապարհում (օդանավակայան)	օր/միկրոավտոբուս	2	1	18.000	36.00
	Մշակութային էքսկուրսիա Սևան	օր/միկրոավտոբուս	1	1	80.000	80.00
2	Ընթրիք (29.08.2016թ.)	հատ/անձ	1	4	6.000	24.00
3	Սուրճի ընդմիջում (30.08-31.08.2016թ.)	հատ/անձ	4	15	1.400	84.00
4	Աշխատանքային ճաշ (30.08.-01.09.2016թ.)	հատ/անձ	3	4	6.000	72.00
5	Դահլիճի վարձակալություն (30.08-31.08.2016թ.)	օր/հատ	2	1	79.000	158.00
6	Հյուրանոցային ծախսեր	օր/անձ	4	3	40.000	480.00
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>					<b>934.00</b>

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**  
 ՀՀ բնապահպանության նախարարություն  
 ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք  
 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
 ՀՀ 900011006021  
 ՀՎՀՀ 02507198

**ԿԱՏԱՐՈՂ**  
 «Անի Պլազա Հոթել» ՓԲԸ  
 ք. Երևան, Սայաթ-Նովա 19  
 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ  
 ՀՀ 163008143634  
 ՀՎՀՀ 01505315

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն №  
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 2016թ.

Պայմանագրի անվանումը՝ Ծառայությունների գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 02 » « 09 » 2016թ.

Պայմանագրի համարը՝ № ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-16/22

Պայմանագրի համարը՝ № ՀՀ ԲՆ-ԾՁԲ-16/22

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետ Վ.Դավթյանի, և Պայմանագրի կողմն՝ ի դեմս «Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Մ.Գրիգորյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 2016թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N\_ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների					Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/		
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի			

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն  
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն  
 Կ.Տ.

**ԱԿՏ N**

**Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև « 02 » « 09 » 2016 թվականին կնքված №ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-16/22 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը « \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 2016 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
 ստորագրություն

\_\_\_\_\_  
 ստորագրություն